Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
««ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Չարենցի փող., 31 բն.4
1.3 Պետական գրանցման համարը		264.160.05729
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-04-02
1.5 ՀՎՀՀ-ն		00072048
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77129998
		+(374)98341612
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.c-i.am
1.8 Էլեկտրոնային փոստը		ani@c-i.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Ալեքսանդր Իսկանդարյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	9	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ներգրավելով հայաստանյան հասարակությունը և կառավարությունը անվտանգ տարածաշրջանի համար օրակարգի ձևավորման մեջ	112,292,534
	Հայաստանի սահմանամերձ մարզերում քաղաքական ակումբների ստեղծումը	40,720,000

Digitally signed by NERSESYAN OFELYA 7503600098
Date: 2025.06.30 16:25:56 AMT

	Երիտասարդների ներգրավումը Հայաստանի ժողովրդավարական ապագայի ձևավորման մեջ հետհեղափոխական, հետպատերազմյան Հայաստանի քաղված դասերի վերլուծության միջոցով	7,409,069
	Ապագայի վերաբերյալ երկխոսության խթանումը երիտասարդների շրջանում	6,543,112
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ներգրավելով հայաստանյան հասարակությունը և կառավարությունը անվտանգ տարածաշրջանի համար օրակարգի ձևավորման մեջ	149,646,360	
Հայաստանի սահմանամերձ մարզերում քաղաքական ակումբների ստեղծումը	20,085,060	
Երիտասարդների ներգրավումը Հայաստանի ժողովրդավարական ապագայի ձևավորման մեջ հետհեղափոխական, հետպատերազմյան Հայաստանի քաղված դասերի վերլուծության միջոցով	5,076,295	
Ապագայի վերաբերյալ երկխոսության խթանումը երիտասարդների շրջանում	6,543,112	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	183,662,314	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2,311,487	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____16____էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ "Four A Consulting" CJSC
audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219 CAA NGO Register 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ, www. 4aconsulting.am Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս +374(10) 52 08 47 info@4aconsulting.am Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Հիմնադրամի հոգեբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի հաշվետվությունը, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2024 թվականի հունիսի 29-ին արտահայտել է ձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

27 հունիսի 2025թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր /Աուդիտի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմանական միջոցներ	4	472	353
Ոչ նյութական ակտիվներ	5	1,534	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		-	-
		2,006	353
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	5,204	11,633
Դրամական միջոցներ	7	46,034	60,583
		51,238	72,216
Ընդամենը ակտիվներ		53,244	72,569
Կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված վնաս		(4,129)	(8,761)
Ընդամենը սեփական կապիտալ		(4,129)	(8,761)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություն	9	-	12,159
Վարձակալության գծով		-	-
Ակտիվներին վերաբերող շնորհ	8	1,534	19
		1,534	12,178
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	47,763	62,149
Արձակուրդի պահուստ		6,628	5,627
Առևտրային և այլ Կրեդիտորական պարտքեր	10	300	1,376
Վարձակալության գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	10	1,148	-
		55,839	69,152
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		53,244	72,569

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 27-ին՝

Տնօրեն
Ալեքսանդր Իսկանդարյան

Հաշվապահ
Օֆելյա Ներսեսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	11	6,300	5,301
Շնորհից եկամուտ	8	179,793	84,781
Այլ եկամուտ	11	82	8,666
		186,175	98,748
Աշխատավարձի գծով ծախս		(91,638)	(68,477)
Մաշվածություն և ամորտիզացիա		(147)	(5,160)
Հեռահաղորդակցության ծախսեր		(2,293)	(1,320)
Բանկային ծախսեր		(219)	(52)
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախս		(2)	(115)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(2,802)	(2,633)
Վարչական այլ ծախսեր		(27,596)	(13,286)
Գործառնական վարձակալ. գծով ծախսեր		(7,333)	-
Գործառնական այլ ծախսեր		(65)	-
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		54,080	7,705
Ֆինանսական եկամուտ		1,385	861
Ֆինանսական ծախսեր			(2,082)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս	12	84	(206)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս		(49,769)	
Շահույթը մինչև հարկումը		5,780	6,278
Շահութահարկի գծով ծախս		(1,148)	(1,043)
Տարվա արդյունք		4,632	5,235

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2002թ. ապրիլի 02-ին:
Հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, կրթական, գիտական և այլ հանրօգուտ նպատակներ: Կազմակերպության հիմնական նպատակներն են՝ Հարավային Կովկասում լրատվամիջոցների մասնագիտական զարգացմանն ու բազմազանության կայացմանն աջակցելը և կրթական ոլորտում բարեփոխումներ կատարելուն նպաստելը:

Հիմնադրամի հիմնադիրներն են՝

- Լիբանանի քաղաքացի՝ պարոն Վիգեն Չեթերյան,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ պարոն Մարկ Գրիգորյան,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ պարոն Ալեքսանդր Իսկանդարյան:

Հոգաբարձուների խորհրդի կազմը.

Ալան Կասան - Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Արտեմ Երկանյան - Հոգաբարձուների խորհրդի անդամ
Գեորգի Գոկսաձե - Հոգաբարձուների խորհրդի անդամ
Գեորգի Դերլուգյան - Հոգաբարձուների խորհրդի անդամ

2024թ. հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 9 մարդ:

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Չարենցի, 31/4:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի համապատասխան:
Ներկայումս միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ձեռնարկը չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի հաշվառման ընդհանուր սկզբունքների վրա:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

ՀՀ ազգային արժույթը հայկական դրամն է ("դրամ"), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	3.71	4.50
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումները:
Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հաշվողական և համակարգչային տեխնիկա	– 1 տարի
Արտադրական և տնտեսական գույք	– 8 տարի
Այլ հիմնական միջոցներ	– 8 տարի

3.3 Պաշարներ

Հիմնադրամը չունի պաշարներ: Գրասենյակային պիտույքները և տնտեսական ապրանքները ծախսագրվում են ձեռքբերման պահին:

3.4 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

i. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնքորպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Հիմնադրամի կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

ii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

iii. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնքչեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

iv. Այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը նվճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

v. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները ճանապարհին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են այլ կրեդիտորական պարտքերը:

I. Այլ կրեդիտորական պարտքեր

Այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.8 Հասույթ

Հիմնադրամի հասույթը հիմնականում բաղկացած է անշարժ գույքի ենթավարձակալության գումարներից:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հաշվողական և համակարգչային տեխնիկա	Արտադրական և տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ.հունվարի 01-ի դրությամբ	4,603	1,232	4,284	10,119
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,603	1,232	4,284	10,119
Ավելացում	220	-	-	220
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,823	1,232	4,284	10,339
Կուտակված մաշվածություն				
2023թ. Հունվարի 01-ի դրությամբ	4,603	1,192	3,930	9,725
Տարվա ծախս	-	19	22	41
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,603	1,211	3,952	9,766
Տարվա ծախս	37	19	45	101
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,640	1,230	3,997	9,867
Հաշվեկշռային արժեք				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	21	332	353
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	183	2	287	472

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ ՈՆԱ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 01-ի դրությամբ	198	-	198
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	-	198
Ավելացում	-	1,580	1,580
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	1,580	1,778
Կուտակված մաշվածություն			

2023թ. հունվարի 01-ի դրությամբ	198	-	198
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	-	198
Տարվա ծախս	-	46	46
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	46	244
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,534	1,534

6. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	108	144
Տրված կանխավճարներ	4,001	10,354
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,095	1,073
Այլ դեբիտորական պարտքեր	-	62
	5,204	11,633

7. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	-	-
Բանկային հաշիվներ	46,034	60,583
	46,034	60,583

8. Ակտիվներին/Եկամուտներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	19	38
Ստացված շնորհներ	1,580	-
Շնորհից եկամուտ	(65)	(19)
Տարեվերջի մնացորդ	1,534	19

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	62,149	29,008
Ստացված շնորհներ	166,922	158,383
Շնորհից եկամուտ	(179,728)	(125,242)
Վերադասակարգված	(1,580)	-
Տարեվերջի մնացորդ	47,763	62,149

Հիմնադրամը ստացել է 166,922 հազ. դրամի դրամաշնորհ, մասնավորապես.

- Բրիտանական դեսպանատան կողմից - 112,293 հազ. դրամ,
- Մաքս Պլանկ հիմնադրամի կողմից - 6,500 հազ. դրամ,
- Նիդեռլանդների թագավորության կողմից - 40,720 հազ. դրամ,
- Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի կողմից - 7,409 հազ. դրամ:

9. Ստացված փոխառություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	-	12,159
	-	12,159

10. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտոր.պարտքեր ստացված ծառայութ.,ընդունվ.աշխ.գծով	268	145
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	15	1,152
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	17	79
	300	1,376

11. Հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գործառնական վարձակալությունից եկամուտ	6,300	5,301
Այլ	82	8,666
	6,383	13,967

12. Փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(1,385)	(206)
	(1,385)	(206)

13. Ֆինանսական գործիքներ

13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

14. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

14.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամը գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

15. Պայմանական պարտավորություններ

15.1 Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

15.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական դրության վրա:

15.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

16. Գործարքներ կապակցված կողմերի միջև

16.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգեբարձուների խորհրդի կողմից:

16.2 Գործարքներ ղեկավարության հետ

Ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	61,498	68,441

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 14:16